ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն, Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2019- 18.06/413
18.06.2019թ.

ՀՀ վարչապետ
Նիկոլ Փաշինյանին

Հարգելի պարոն վարչապետ,

Հայտնում եմ, որ իր ընտանիքի իրավունքների պաշտպանության նպատակով կազմակերպություն է դիմել Վայոց Ձորի Խաչիկ համայնքի բնակիչ Էդիկ Գրիգորյանը:

Դիմելով կազմակերպություն վերջինս հայտնել է, որ 1992թ. ռազմական գործողությունների ընթացքում ադրբեջանական զինուժի կողմից կատարած հրետակոծությունների հետևանքով իր տան վրա ընկել է «Գրադ» տեսակի ռազմական տեխնիկայի թվով երկու արկ, որի հետևանքով հասցված վնասը մինչ օրս պետության կողմից չի հատուցվել:

Էդիկ Գրիգորյանը միաժամանակ հայտնել է, որ 2004թ. կատարած հետազոտության արդյունքում նշված բնակելի տունը ճանաչվել է որպես 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող վթարային տուն, իսկ բնակելի տան վրա մինչ օրս հիմնանորոգման, ամրացման, վերակառուցման աշխատանքներ չեն կատարվել, որի հետևանքով նշված բնակելի տանը բնակվելը կարող է անդառնալի հետևանքներ առաջացնել Է. Գրիգորյանի ընտանիքի համար, քանի որ բնակելի տունը ժամանակի ընթացքում ավելի է քանդվում:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դրույթները խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե՝

1. ի՞նչ պատճառներով մինչ օրս պետության կողմից չի փոխհատուցվել Է. Գրիգորյանի ընտանիքի կրած վնասը,
2. ե՞րբ է նախատեսվում համարժեք փոխհատուցում տրամադրել Է. Գրիգորյանի և նմանատիպ խնդիր ունեցող այլ ընտանիքներին,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 094/4396
«25» 06 2019թ.

3. ռազմական գործողությունների արդյունքում թվով քանի՞ ընտանիքի բնակելի տուն է դարձել վթարային և քանի՞ ընտանիքի է մինչ օրս փոխհատուցում տրամադրվել,

Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ուստի, ելնելով վերը նշվածից, խնդրում եմ տեղեկատվություն ստանալու հարցմանս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

Կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Հ. Հակոբյան
Էլ. հասցե՝ hhakobyan@hcav.am
Հեռ.՝ 094042268